

Բաժին 1 - Ո՞վ կարող է դիմել:

Յարդ 1

Եթե քաղաքի բնակիչների թիվը միայն 500 բնակչով է պակաս պահանջվող թվից՝ ըստ իրավասության չափանիշների (տես 2.1.2. Աշխարհագրական և հատուկ իրավասություն), կարո՞ղ է արդյոք այդ քաղաքը դիմել հայտերի միցույթի շրջանակներում:

Պատասխան

Միայն այն քաղաքները, որոնք լիովին համապատասխանում են Առաջարկների կանչի իրավասության բոլոր չափանիշներին, կարող են դիմել սույն Առաջարկների կանչին: Եթե քաղաքի բնակիչների թիվը համապատասխանության չափանիշների համաձայն պահանջվող թվից 500 բնակիչ պակաս է, ապա այդ քաղաքը սույն Առաջարկների կանչի շրջանակներում կդիտվի որպես ոչ իրավասու:

Յարդ 2

Ո՞ր հաստատությունը / կազմակերպությունը կարող է ներկայացնել հայտը: Պարտադի՞ր է, որ Գլխավոր հայտատուն լինի հանրային հաստատություն, որ ներկայացնում է դիմող քաղաքը: Կարո՞ղ է արդյոք որևէ ՀԿ, իրավաբանական անձ կամ խորհրդատվական ընկերություն հայտ ներկայացնել: Կարո՞ղ է որևէ համալսարան դիմում ներկայացնել:

Պատասխան

Գլխավոր հայտատուն կարող է լինել քաղաքային իշխանությունը, որ ներկայացնում է տվյալ քաղաքի մշակույթն ու (կամ) ստեղծարար հատվածը: Քաղաքը կարող է լիազորել վստահելի և (կամ) համապատասխան ՀԿ-ի՝ որպես Գլխավոր հայտատու հանդես գալ քաղաքի անունից (ամբողջական դիմումի փուլում կպահանջվի պաշտոնական թույլտվություն, օրինակ՝ լիազորագրի ձևով):

Պետական համալսարանները նույնպես կարող են հանդես գալ որպես Գլխավոր հայտատու՝ քաղաքի անունից կամ որպես համահայտատուներ, սակայն անհրաժեշտ է հստակ հղում և գործունեության ուղղվածություն՝ մշակույթի և ստեղծագործական ոլորտներում: Շահույթ հետապնդող կազմակերպությունները կամ արտաքին փորձագետները (օրինակ՝ խորհրդատվական ընկերություններ) չեն կարող հանդես գալ որպես Գլխավոր հայտատու, սակայն դրանք կարող են ներգրավվել Գլխավոր հայտատուի կողմից՝ իրականացնելու որոշակի նախապատրաստական / իրականացման գործողություններ:

Յարդ 3

Ո՞վ պետք է պատրաստի և ներկայացնի հայտը, եթե տեղական մարմինը ուզում է դիմել մեկ այլ՝ շահույթ չհետապնդող կազմակերպության հետ միասին:

Պատասխան

Դիմումների սույն Կոչի շրջանակներում «ներքևից վերև» մոտեցման համաձայն, Գլխավոր հայտատուն ինքն է որոշում, թե ով պետք է պատրաստի հայտը: Այնուամենայնիվ, հայտի ներկայացումը/ ուղարկումը պետք է թույլատրվի/ ստորագրվի Գլխավոր հայտատուի օրինական ներկայացուցչի (օր.՝ քաղաքի քաղաքապետ) կողմից:

Յարգ 4

Ո՞ր դեպքում պետք է Գլխավոր հայտատուն և համահայտատուն լինեն նույն քաղաքից, և որո՞նք են շահույթ չհետապնդող կազմակերպությունների այն տեսակները, որոնք պարտադիր չէ, որ նույն քաղաքից լինեն:

Պատասխան

Որպես համահայտատու հանդես եկող տարածաշրջանային / տեղական պետական մարմինը պետք է լինի նույն քաղաքից: Մարզային պետական մարմիններ ասելով հասկանում ենք քաղաքականություն մշակող հաստատություններ և կառավարման մարմիններ (քաղաքապետարաններ):

Հանրային կազմակերպությունների այլ տեսակներ, օրինակ՝ այլ քաղաքների իրավաբանական անձինք կամ ոչ-պետական շահույթ չհետապնդող կազմակերպություններ նույնպես կարող են լինել համահայտատու:

Յարգ 5

Կարո՞ղ է մայրաքաղաքում գրանցված շահույթ չհետապնդող կազմակերպությունը հանդես գալ որպես Գլխավոր / համահայտատու:

Պատասխան

Շահույթ չհետապնդող կազմակերպությունները կարող են դիմել որպես Գլխավոր / համահայտատու, նույնիսկ այն դեպքում եթե դրանք գրանցված են մայրաքաղաքում (ընտրության գործընթացում կազմակերպության պրոֆիլը և դրա փորձը տեղական մակարդակում հաշվի կառնվեն): Խնդրում ենք Ուղղույցում տես Q2 բաժինը:

Յարգ 6

ՀԿ-ների համար գրանցման ժամկետի վաղեմության պահանջ կա՞ արդյոք:

Պատասխան

Ոչ - պետական հաստատությունները (ներառյալ ՀԿ-ները) պետք է ներկայացնեն վերջին 2 տարվա ֆինանսական հաշվետվությունը: Այսպիսով, ՀԿ/շահույթ չհետապնդող կազմակերպության գրանցման ժամկետի նվազագույն պահանջը 2 տարի է:

Յարգ 7

Կարո՞ղ է արդյոք ՅԿ-ն լինել ավելի քան մեկ նախագծի համահայտատու: Եվ կարո՞ղ է արդյոք մեկ քաղաք երկու հայտ ներկայացնել:

Պատասխան

Քաղաքի անունից որպես Գլխավոր հայտատու հանդես եկող ՅԿ-ն չի կարող ներկայացնել մեկից ավելի առաջարկ: Բայց որպես համահայտատու, ՅԿ-ները կարող են ներգրավված լինել մի քանի առաջարկների պատրաստման / մասնակցության մեջ: Քաղաքը կարող է ներկայացնել միայն մեկ դիմում:

Յարգ 8

Պարտադի՞ր է արդյոք, որ ՅԿ-ների կանոնադրական փաստաթղթերում ՄՍԱ-ով զբաղվելու իրավունքը հաստատագրված լինի:

Պատասխան

Ձևականորեն դա անհրաժեշտ չէ, թեև բովանդակության գնահատման ընթացքում հաշվի կառնվեն մշակույթի և ստեղծագործական ոլորտում դիմորդի փորձը, ինչպես նաև տեղական համատեքստի իմացությունը:

Յարգ 9

Կարո՞ղ են արդյոք այն քաղաքները, որտեղ գտնվում էր Եվրոպայի տան տաղավարը, դարձյալ դիմել: Արդյո՞ք կբացառվեն այն քաղաքները, որոնք դրամաշնորհ են ստացել «Մշակութային մայրաքաղաք» -ի շրջանակներում (օրինակ՝ Ուկրաինայի մշակութային հիմնադրամից):

Պատասխան

Այն քաղաքները, որտեղ գտնվում էր Եվրոպայի տան տաղավարը, նույնպես կարող են դիմել: Չեն բացառվի նաև այն քաղաքները, որոնք դրամաշնորհ են ստացել «Մշակույթի մայրաքաղաք» ուկրաինական մշակութային հիմնադրամից, չնայած նախապատվությունը կարող է տրվել նախկինում ֆինանսավորում չստացած քաղաքներին:

Բաժին 2 – Ստորագրելու համար լիազորված անձինք, ինքնահայտարարագիր

Յարգ 10

Եթե ՅԿ / շահույթ չհետապնդող կազմակերպությունը տեղական ինքնակառավարման մարմինների անունից հանդես է գալիս որպես Գլխավոր հայտատու, ո՞ր կազմակերպության տվյալները պետք է լրացվեն ինքնահայտարարագրման ձևաթերթում:

Պատասխան

Ինքնահայտարարագրի ձևաթղթում պետք է լրացնել քաղաքի տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվությունը: Ինքնահայտարարագրի ձևաթուղթը պետք է ստորագրվի տեղական իշխանության կողմից (այստեղ՝ քաղաքի օրինական ներկայացուցիչը):

Յարգ 11

Կարո՞ղ է արդյոք ինքնահայտարարագրի ձևաթուղթը ստորագրել ոչ թե քաղաքապետը, այլ համապատասխան տեղակալը կամ մարզային խորհրդի ղեկավարը: Եվ եթե քաղաքապետը արձակուրդում է, ապա ո՞վ պետք է ստորագրի այն:

Պատասխան

Ինքնահայտարարագիրը պետք է ստորագրվի քաղաքի օրինական ներկայացուցչի կողմից: Օրինական ներկայացուցիչը սահմանվում է տվյալ քաղաքի ներքին կանոնակարգով: Եթե համապատասխան տեղակալը կամ տարածաշրջանային խորհրդի ղեկավարը լիազորված է ստորագրել այս տեսակի փաստաթուղթ, EU4Culture- ը կընդունի նրա ստորագրությամբ փաստաթուղթը: Քաղաքապետի բացակայության դեպքում ինքնահայտարարագրի ձևաթուղթը կարող է ստորագրել համապատասխան լիազորություն ունեցող անձը:

Բաժին 3 - Ընտրության գործընթացը

Յարգ 12

Ինչպե՞ս է կազմակերպվում ընտրության գործընթացը: Որոշումը երկրի մակարդակ՞վ է կայացվում, թե՞ միջազգային:

Պատասխան

Ընտրության կարգը հետևյալն է.

- Տեխնիկական և իրավասության գնահատումը կատարվում է EU4Culture թիմի կողմից,
- Հայեցակարգի որակական կողմը / լրիվ դիմումների բովանդակության հետ կապված գնահատումը կկատարվի ժյուրիի անկախ անդամների (ազգային փորձագետներ) կողմից,
- Ելնելով ժյուրիի անկախ անդամների առաջարկություններից՝ EU4Culture- ը վերջնական որոշում կկայացնի

Յարգ 13

Որո՞նք են հայեցակարգի գնահատման չափանիշները:

Պատասխան

Հայեցակարգի գնահատման չափանիշները նկարագրված են Ուղեցույցի «Հայեցակարգի գնահատում և ընտրություն» բաժնում (4-րդ բաժին):

Բաժին 4. Ինչի՞ համար կարող է օգտագործվել Ֆինանսավորումը: Ամբողջական հայտի ներկայացում: Ի՞նչ պետք է ընդգրկի ռազմավարությունը:

Յարդ 14

Ջնարավոր է արդյոք 1000 եվրոն օգտագործել խորհրդատվության համար, օրինակ, խորհրդատուի ծառայությունների վճարման համար: Կարո՞ղ է արդյոք Գլխավոր հայտատուն / համահայտատուն արտաքին աջակցություն ձեռք բերել ամբողջական հայտը պատրաստելիս (փուլ 2), և եթե այո, ապա ի՞նչ ընթացակարգ է որոշված:

Պատասխան

Ուղղակի ծախսերը, օրինակ, խորհրդատուի ծառայություններն իրավասու են: Արտաքին աջակցությունը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները, կարող են օգտագործվել նաև դիմումի ամբողջական պատրաստման գործընթացում:

Յարդ 15

Ի՞նչ տեսակի փաստաթղթեր պետք է տրամադրվեն արտաքին փորձագիտության համար: Կարո՞ղ են այդ արտաքին փորձագետները օտարերկրյա բնակիչներ լինել: Ծառայության պայմանագիրը բավարար կլինի:

Պատասխան

Արտաքին փորձաքննության ներգրավման դեպքում ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը ներառում է հետևյալ փաստաթղթերը.

- Ստորագրված և գործող պայմանագիր (որն հարգում է պետական գնումների ազգային կանոնները)
- Ժամանակացույցը
- Եթե ռեզիդենտ չէ, բնակության վկայագիր, որը կապացուցի այլ երկրում գրանցված լինելը
- Եթե փորձագետը մասնավոր ձեռնարկատեր է - հարկի նույնականացման համարը, որ կհաստատի որ նա պատասխանատու է իր բնակության հարկերի վճարման համար:

Յարդ 16

Ջնարավոր է 300,000 եվրոն ծախսել մշակութային ապրանքների, մշակութային ժառանգության վերականգնման, առցանց թանգարանի ստեղծման, նմանատիպ հետազոտությունների վրա:

Պատասխան

Դրամաշնորհը չի կարող օգտագործվել մշակութային արտադրանք գնելու կամ հիմնական ենթակառուցվածքային նպատակներով, ինչպիսին է, օրինակ, մշակութային ժառանգության վերականգնումը: Ծախսերի մեծ մասը նախատեսվում է օգտագործել կայուն և մնայուն ռազմավարություն մշակելու համար (ներառյալ հետազոտությունները և կարողությունների զարգացման միջոցառումները): Այնուամենայնիվ, պիլոտային նախագծերի կամ փորձնական / ցուցադրական ներդրումների ծախսերը իրավասու են: Պիլոտային /ցուցադրական ներդրումների ծախսերը սովորաբար չպետք է գերազանցեն ստացված դրամաշնորհի 20% -ը: Եթե ավելի մեծ ներդրումներ են նախատեսվում, դրանք նախապես պետք է հաստատվեն EU4Culture թիմի կողմից:

Յարգ 17

Արդյո՞ք ռազմավարությունը պետք է համապարփակ ընդգրկի մշակույթի բոլոր ոլորտները, թե՛ այն կարող է կենտրոնանալ քաղաքի մշակութային հատվածի խնդրահարույց կողմերի կամ գերակայությունների վրա:

Պատասխան

Գլխավոր հայտատուն ինքն է որոշում ռազմավարության շրջանակն ու շեշտադրումը: Այնուամենայնիվ, առաջարկվում է, որ ռազմավարությունը լինի իրատեսական, իրագործելի և կայուն: Այսպիսով, պարտադիր չի որ ռազմավարությունն ընդգրկի մշակույթի բոլոր բնագավառները, այն կարող է կենտրոնանալ առաջնահերթ և (կամ) խնդրահարույց խնդիրների վրա, որոնք հատկապես կարևոր են հայտատու քաղաքի համար:

Յարգ 18

Կարո՞ղ ենք ռազմավարությունն իրականացնել այլ երկրների կամ քաղաքների գործընկերների հետ:

Պատասխան

EU4Culture- ն աջակցում է միջտարածաշրջանային և միջազգային գործունեության իրականացմանը: Այսպիսով, (արդարացված լինելու դեպքում) գործունեությունը կարող է իրականացվել ինչպես ազգային, այնպես էլ միջտարածաշրջանային մակարդակով (օրինակ՝ համագործակցելով Արևելյան գործընկերության երկրների այլ տարածաշրջանների հետ: Կարևոր է, որ քաղաքը ուղղակիորեն օգուտ ստանա այլ երկրների հետ նախատեսված գործընկերությունից:

Յարգ 19

Որո՞նք են հաղորդակցման պահանջները: Արդյո՞ք հաղորդակցությունը շատ պիտի լինի: Բյուջեի ո՞ր մասը պետք է հատկացվի հաղորդակցությունների համար:

Պատասխան

Պետք է պատրաստել երկարաժամկետ և կայուն հաղորդակցության ռազմավարություն: Ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը պետք է փոխանցվի հստակ կերպով: Մանրամասները՝ ուղեցույցի հետևյալ բաժնում.

2.1.3. Իրավասու գործողություններ // Տեսանելիություն

Յաղգ 20

Ի՞նչ դեր ունեն ՅԿ-ները և ոչ առևտրային կազմակերպությունները այս նախագծում: Ինչպե՞ս եք տեսնում նրանց և տարածաշրջանային իշխանությունների համագործակցությունը:

Պատասխան

Մշակութային զարգացման ռազմավարությունը պետք է ունենա ցանցային հիմք: Գործընթացում առանցքային շահագրգիռ կողմերի ներգրավումը շատ կարևոր է: Շահագրգիռ կողմերը (ՅԿ-ները, մասնագիտական ասոցիացիաները, հովանոցային կազմակերպությունները) պետք է ներգրավվեն որոշումների կայացման և ռազմավարության մշակման գործընթացում՝ ներկայացնելով մշակույթի և ստեղծարար արդյունաբերության հեռանկարներն ու շահերը: Շահագրգիռ կողմերի ճշգրիտ դերը պետք է որոշեն իրենք՝ հայտատուները: Ամբողջական հայտում (II փուլ) ժյուրիի անդամները նաև կգնահատեն, թե որքանով է մասնակցային մոտեցումը արտացոլված / պլանավորված ներկայացվող հայտում:

Յաղգ 21

Ռազմավարության պատրաստման փուլում արդյո՞ք կտրամադրվի կարողությունների զարգացման փորձագետների ցանկը: Կարո՞ղ եմք լրացուցիչ փորձագետներ ներգրավել:

Պատասխան

EU4Culture- ը կտրամադրի աջակցություն կարողությունների զարգացման համար: Այնուամենայնիվ, դիմորդները կարող են նաև քննարկել այլ, արտաքին փորձագետների ներգրավման հարցը՝ կախված իրենց կարիքներից:

Յաղգ 22

Կարո՞ղ է արդյոք քաղաքապետարանի մշակույթի վարչությունը մասնակցել հայտերի մշակմանը:

Պատասխան

Այո, քաղաքապետարանի մշակույթի վարչությունը կարող է և խրախուսվում է՝ մասնակցել հայտերի ներկայացման գործընթացին:

Յաղգ 23

Եթե քաղաքն արդեն իսկ ունի ռազմավարություն, բայց մենք պետք է այն էլ ավելի զարգացնենք, արդյո՞ք դա նվազեցնում է մեր հնարավորությունները:

Պատասխան

Ոչ, չի նվազեցնում:

Յարգ 24

Արդյո՞ք ամբողջական հայտը պետք է լրացվի միայն անգլերեն լեզվով:

Պատասխան

Այո, ամբողջական հայտը պետք է լրացնել անգլերենով:

Բաժին 5 – Ֆինանսներ, վարչարարություն և հաշվետվություններ

Յարգ 25

Ինչպե՞ս է դրամաշնորհը բաշխվելու հիմնական հայտատուի և համահայտատուների միջև:

Պատասխան

Առաջատար հայտատուն ինքն է որոշում, թե ինչպես են բաշխելու միջոցները գլխավոր հայտատուի և համահայտատուների միջև: Ֆոնդերի բաշխումը պետք է հիմնված լինի տրամաբանական մոտեցման վրա՝ համաձայն ծրագրված գործողությունների և նախագծում գործընկերների դերի: Ամբողջական հայտի փուլում հայտատուն պետք է ներկայացնի բյուջեի մանրամասն պլանը, ներառյալ գործընկերների միջև բյուջեի բաշխումը:

Յարգ 26

Ենթադրվում է արդյոք, որ առաջատար հայտատուն ներդրում է կատարելու՝ սեփական համաֆինանսավորմամբ:

Պատասխան

Համաֆինանսավորումը պարտադիր չէ: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ ռազմավարության մշակման կամ իրականացման շրջանակներում որոշակի գործողություններ չեն կարող ամբողջությամբ ծածկվել EU4Culture դրամաշնորհով, այդ ծախսերը կարող են համաֆինանսավորվել գլխավոր և (կամ) համահայտատուների կողմից:

Յարգ 27

Արդյո՞ք վերջին 2 տարվա ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու խնդրանքը վերաբերում է հասարակական կազմակերպություններին թե՞ նաև տեղական վարչակազմերին (քաղաքապետարան կամ գործադիր իշխանության տեղական մարմին): 34-

ի դեպքում (դեկավար / համահայտատու) այս հարցումը ենթադրում է արդյոք, որ այն պիտի գործի առնվազն 2 տարի:

Պատասխան

Վերջին տարիների ֆինանսական հաշվետվությունը պետք է ներկայացվի միան մասնավոր կազմակերպությունների (օրինակ՝ ՀԿ-ների) կողմից: Պետական հաստատություններից (օր.՝ պետական մարմիններ, պետական համալսարաններ) չի պահանջվում ներկայացնել այդ ֆինանսական հաշվետվությունները:

Հարց 28

Որո՞նք են ֆինանսների փոխանցման ընթացակարգերն ու կանոնները: Ինչ տեսակի փաստաթղթեր են անհրաժեշտ փոխանցման համար:

Պատասխան

Ընտրված դիմորդները պայմանագրային համաձայնագիր կստորագրեն Պայմանավորվող մարմնի հետ (այստեղ՝ Գյոթեի ինստիտուտ): Միջոցները շահառուներին կփոխանցվեն պայմանագրի համաձայն:

Հարց 29

Ի՞նչ պետք է նշված լինի բյուջեի ձևանմուշում և ի՞նչ քանակի դրամի համար:

Պատասխան

Առաջին փուլում ընտրված քաղաքները կստանան մինչև 1000 եվրո՝ իրենց ամբողջական հայտը պատրաստելու համար: Հայեցակարգի ներկայացման փուլում ինդրում ենք տրամադրել ցուցիչ բյուջե, թե ինչպես եք նախատեսում ծախսել այս գումարը: Ծախսերը պետք է անմիջականորեն կապված լինեն ամբողջական հայտի պատրաստման հետ (օրինակ՝ դրանք կարող են լինել հայտը պատրաստող անձնակազմի, թարգմանության, սրբագրման և այլնի ծախսեր):

Հարց 30

Արդյո՞ք ամբողջական հայտի փուլում պետք է ներկայացվեն աուդիտի ֆինանսական հաշվետվություններ: Կարո՞ղ ենք աուդիտի համար օգտվել դրամաշնորհային ֆինանսավորումից: Կարո՞ղ ենք միանգամից անցնել այս երկու աուդիտները:

Պատասխան

Ֆինանսական հաշվետվությունները (կամ այլ փաստաթղթեր, ինչպիսիք են տարեկան եկամուտները) պետք է տրամադրվեն՝ հայտատուի ֆինանսական իրավասությունը հաստատելու համար: Դրանց կարիքը կլինի հաջորդ՝ 30 000 եվրո ֆինանսավորմանը դիմելու

փուլում: Դրամաշնորհը ծախսելուց հետո դրամաշնորհառուները կտրամադրեն մանրամասն տեղեկություններ ծախսերի վերաբերյալ: Այս ծախսերը ստուգվելու են EU4Culture- ի կողմից:

Յարգ 31

Արդյո՞ք մարզային իշխանությունները նույնպես պետք է տրամադրեն աուդիտի հաշվետվություններ:

Պատասխան

Այո, նրանք պետք է ներկայացնեն ֆինանսական հաշվետվություններ, դրամաշնորհների ծախսերը պետք է վավերացվեն:

Յարգ 32

Արդյո՞ք հաջորդ փուլերում ՅԿ-ների աուդիտի ֆինանսական հաշվետվություններին հատուկ պահանջներ կան, որ պետք կլինի հաշվի առնել:

Պատասխան

Ֆինանսական հաշվետվությունները (կամ այլ փաստաթղթեր, ինչպիսիք են տարեկան եկամուտները) պետք է տրամադրվեն հայտատուի ֆինանսական իրավասությունը հաստատելու համար: Ծախսերի իրավասության և դրանց ծախսման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը կիրապարակվի հայտերի ամբողջական փուլի մանրամասն ուղեցույցում:

Յարգ 33

Դրամաշնորհների վճարների համար ֆիքսված արտարժույթի փոխարժեք կլինի՞ արդյոք: Ինչպե՞ս կարող ենք կանխել արտարժույթի փոխարժեքի հավանական կորուստները:

Պատասխան

Կլինի ֆիքսված արտարժույթի փոխարժեք, որի համաձայն միջոցները կփոխանցվեն տեղական արժույթով: